ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ք. Երևան 11.12.2017թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի

թիվ ԳԲԽ-ԷՍ-2017/48

ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդը (այսուհետ՝ նաև Խորհուրդ) քննելով ՀՀ քաղաքացի Սարգիս Թադևոսյանի 28.11.2017թ. ներկայացրած բողոքը (այսուհետ՝ նաև Բողոք) և կից փաստաթղթերը, պարզեց հետևյալը.

1. **<u>ՀՀ քաղաքացի Սարգիս Թադևոսյանի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը.</u>**

ՀՀ քաղաքացի Սարգիս Թադևոսյանը (այսուհետ՝ նաև քաղաքացի) ՀՀ գնումների բողոքարկման խորհրդին 28.11.2017թ. ներկայացրել է բողոք, որով հայտնել է հետևյալը.

««Երևանի հ. 192 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի կողմից 13.11.2017թ. հայտարարված «192ԴՊ-ԳՀԱԽՁԲ-17/1» ծածկագրով ընթացակարգի հրավերի պայմանագրի նախագծի Հավելված 1-ում ապրանքների մատակարարման ժամկետը նշել է 10 օրացուցային օր:

Հրավերով սահմանված տեխնիկական բնութագրին համապատասխան դահլիճային բազկաթոռները Հայաստան ներկրելու համար առնվազն 2 ամիս է անհրաժեշտ, իսկ եթե փորձ արվի այն արտադրել Հայաստանում, ապա ևս նույնքան ժամանակ կպահանջվի:

Պատվիրատուի կողմից նշված 10 օրացուցային օրում հնարավոր է մատակարարել միայն այն դեպքում, երբ պատվիրատուի հետ կապ ունեցող մասնակիցը նախապես իմացել է նշված մրցույթի մասին վաղօրոք պատրաստել կամ ներկրել Հայաստան որպեսզի մրցույթը հայտարարելուց հետո հենց նախահաշվային գներով մատակարարի:

Վերը նշվածը հաստատում է նաև այն հանգամանքը, որ ըստ հրավերով սահմանված պահանջի, հաղթող ընկերությունը ապրանքի ներմուծելուց առաջ տեսքը պետք է համաձայնեցնի պատվիրատուի հետ, իսկ պայմանագիրը կնքելուց 10 օրացուցային օրվա ընթացքում հնառավոր չէ համաձայնեցնել, որից հետո ներկրել և մատակարարել:

Պատվիրատուի հնարավոր այն պատճառաբանությունը, որ տարին ավարտվում է և գնումը պետք է կատարել, ևս անհիմն է, քանի որ դպրոցների գնումների պլանները հաստատվում է տարեսկզբին և դպրոցը տևական ժամանակ է ունեցել ժամանակին մրցույթ հայտարարելու և հավասար մրցակցային պայմաններ ստեղծելու համար: Իսկ որ մրցույթը հիմա է հայտարավել, դրա մեջ ևս խտրական վերաբերմունքի միտում եմ տեսնում:

Ելնելով վերոգրյալից գտնում եմ, որ պատվիրատուի կողմից ստեղծվել են անհավասար մրցակցային պայմաններ՝ խախտելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի ներքոշարադրյալ դրույթները.

ՀՀ «Գնումների մասին» օրենքի 13-րդ հոդվածի 2-րդ կետի համապատասխանաբար 1-ին և 2-րդ ենթակետերի համաձայն՝ գնման առարկայի բնութագրերը պետք է մրցակցության հավասար պայմաններ ապահովեն հնարավոր մասնակիցների համար, և չպետք է հանգեցնեն գնումների գործընթացում մրցակցության համար չհիմնավորված խոչընդոտների առաջացմանը:

ՀՀ «Գնումների մասին» օրենքի 46-րդ հոդվածի համապատասխանաբար 1-ին և 3-րդ կետերի համաձայն՝

յուրաքանչյուր անձ իրավունք ունի բողոքարկելու պատվիրատուի, գնահատող հանձնաժողովի և գնումների բողոքարկման խորհրդի գործողությունները (անգործությունը) և որոշումները;

յուրաքանչյուր անձ իրավունք ունի նույն օրենքի համաձայն՝

1) նախքան պայմանագրի կնքումը բողոքարկելու պատվիրատուի և գնահատող հանձնաժողովի գործողությունները (անգործությունը) և որոշումները գնումների բողոքարկման խորհրդին.

2) դատական կարգով բողոքարկելու գնումների բողոքարկման խորհրդի, պատվիրատուի և գնահատող հանձնաժողովի գործողությունները (անգործությունը) և որոշումները:

«Գնումների մասին» օրենքի 20-րդ հոդվածի 7-րդ մասի համաձայն՝

Խորհուրդը՝

1. իրավունք ունի պատվիրատուի և գնահատող հանձնաժողովի գործողությունների

կամ անգործության վերաբերյալ ընդունելու հետևյալ որոշումները.

ա) արգելելու կատարել որոշակի գործողություններ և ընդունել որոշումներ,

բ) պարտավորեցնելու ընդունել համապատասխան որոշումներ, ներառյալ՝ չկայացած հայտարարելու գնման ընթացակարգը, բացառությամբ պայմանագիրը անվավեր ճանաչելու մասին որոշման,

գ) փոփոխելու ընդունված որոշումները»:

ՀՀ քաղաքացի Սարգիս Թադևոսյանը բողոքով խնդրել է.

Չեղյալ համարել «192ԴՊ-ԳՀԱԽՁԲ-17/1» ծածկագրով անցկացվող գնման ընթացակարգը և հայտարարել նոր ընթացակարգ՝ սահմանելով մատակարարման ողջամիտ ժամկետ:

Բողոքի քննության նպատակով Խորհրդում տեղի ունեցած նիստերին մասնակցում էր բողոք բերող անձ ՀՀ քաղաքացի Սարգիս Թադևոսյանը:

2. <u>«Երևանի հ. 192 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված փաստերը, հիմնավորումները և դիրքորոշումը.</u>

Ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 4-րդ մասով՝ ստացված բողոքի վերաբերյալ որոշում կայացնելու նպատակով, Խորհուրդը 28.11.2017թ. դիմել էր «Երևանի հ. 192 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ին (այսուհետ՝ Պատվիրատու)՝ առաջարկելով նույն հոդվածով սահմանված ժամկետում Խորհրդին տրամադրել անհրաժեշտ բոլոր փաստաթղթերի պատճենները և Պատվիրատուի գրավոր դիրքորոշումը:

Պատվիրատուն Խորհրդին է ներկայացրել Բողոքի քննության համար անհրաժեշտ համապատասխան փաստաթղթերը, սակայն Բողոքի վերաբերյալ որևէ գրավոր դիրքորոշում վերջինիս կողմից Խորհրդին չի տրամադրվել:

Բողոքի քննության նպատակով Խորհրդում տեղի ունեցած նիստերին մասնակցում էր «Երևանի հ. 192 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի լիազորված ներկայացուցիչ Դավիթ Մելիքսեթյանը:

3. <u>«ԴԱՇԱ» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.</u>

ԳԲԽ-ԷՍ-2017/48 բողոքի քննության շրջանակներում որպես երրորդ անձ ներգրավված «ԴԱՇԱ» ՍՊԸ-ն 01.12.2017թ. Խորհրդին ուղղված գրությամբ հայտնել է հետևյալը.

«Երևանի հ. 192 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի (այսուհետ նաև՝ Պատվիրատու) կողմից դահլիճային բազկաթոռների ձեռքբերման նպատակով 13.11.2017թ. հայտարարվել է 192ԴՊ-ԳՀԱՊՁԲ-17/1 ծածկագրով գնման ընթացակարգ (այսուհետ՝ նաև Ընթացակարգ):

Ընթացակարգի հայտերի ներկայացման վերջնաժամկետ է սահմանվել 24.11.2017թ. ժամը 11:00-ն:

Ընթացակարգի հրավերի 3-րդ մասով սահմանվել է հրավերի վերաբերյալ պարզաբանում ներկայացնելու և հրավերում փոփոխություններ կատարելու կարգը:

Ընթացակարգի հրավերի թիվ 1 հավելվածով նախատեսված՝ տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի համաձայն՝ ապրանքի մատակարարման ժամկետ է սահմանվել պայմանագիրը ուժի մեջ մտնելուց հետո 10-րդ օրացուցային օրը:

Ընթացակարգի հրավերի թիվ 7 հավելվածով սահմանված պայմանագրի նախագծի 8-րդ մասի 8.8 կետի համաձայն՝ ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Վաճառողի առաջարկության առկայության դեպքում, պայմանով, որ Գնորդի մոտ չի վերացել ապրանքի օգտագործման պահանջը: Ընդ որում նույն կետով սահմանված դեպքում ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

Ընթացակարգի հայտերի բացման նիստը տեղի է ունեցել 24.11.2017թ. ժամը 11:00-ին:

Պատվիրատուն մինչև հայտերի բացման վերջնաժամկետը որևէ կազմակերպության կողմից գրավոր և բանավոր հրավերի վերաբերյալ՝ ապրանքի մատակարարման ժամկետի վերաբերյալ պարզաբանում կամ դժգոհություններ չի ստացել:

Հայտերի բացման արդյունքում 1-ին տեղ զբաղեցնող և հետագայում հաղթող մասնակից է ճանաչվել «ԴԱՇԱ» ՍՊԸ-ն:

Սակայն, www.gnumner.am կայքի միջոցով տեղեկանում ենք, որ Գնումների բողոքարկման խորհրդում << քաղաքացի Սարգիս Թադևոսյանի կողմից 28.11.2017թ. ստացվել է բողոք:

Բողոքաբերը բողոքով հայտնել է, որ դահլիճային բազկաթոռները << ներկրելու համար առնվազն 2 ամիս ժամանակ է անհրաժեշտ, ինչպես նաև նշել է, որ պատրաստելու համար ևս նույնքան ժամանակ է անհրաժեշտ: Ըստ բողոքաբերի Պատվիրատուն խախտել է «Գնումների մասին» << օրենքի 13-րդ հոդվածով սահմանված պահանջները: Բողոքաբերը խնդրել է չեղյալ համարել 192ԴՊ-ԳՀԱՊՁԲ-17/1 ծածկագրով գնման ընթացակարգը և հայտարարել նոր ընթացակարգ՝ սահմանելով մատակարարման ողջամիտ ժամկետ:

«Գնումների մասին» << օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 3-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի համաձայն.

1. Նույն օրենքի նպատակն է ապահովել գնումների գործընթացում հատուցման դիմաց արժեք, այն է՝

1) պատվիրատուին վերապահված լիազորությունների կատարման համար անհրաժեշտ՝ կարիքին համապատասխան ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ձեռքբերում՝ համարժեք հատուցմամբ.

2) գնումների և գնումների գործընթացի տնտեսող, արդյունավետ և օգտավետ իրականացում:

2. Գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա.

1) գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպում.

2) պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախուսում.

3) ցանկացած անձի համար, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարություն:

Օրենքի 7-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի համաձայն.

1. Ցանկացած անձ, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, ունի գնման գործընթացին մասնակցելու հավասար իրավունք:

2. Գնումների գործընթացին որևէ երկրի ռեզիդենտ հանդիսացող անձի (անձանց) մասնակցությունը կարող է սահմանափակվել միայն Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ, եթե դա անհրաժեշտ է Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության և պաշտպանության ապահովման համար:

Օրենքի 13-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գնման առարկայի բնութագրերը՝

1) պետք է մրցակցության հավասար պայմաններ ապահովեն հնարավոր մասնակիցների համար.

2) չպետք է հանգեցնեն գնումների գործընթացում մրցակցության համար չհիմնավորված խոչընդոտների առաջացմանը.

3) պետք է լինեն օբյեկտիվորեն հիմնավորված և համարժեք լինեն այն կարիքին, որի բավարարման նպատակով կատարվում է տվյալ գնումը.

4) ներառում են գնման առարկայի մասնագրի, տեխնիկական տվյալների, իսկ աշխատանքների դեպքում՝ նաև աշխատանքների ծավալաթերթի, ժամանակացույցի և այլ ոչ գնային պայմանների ամբողջական և համարժեք նկարագրությունը:

Օրենքի 46-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր անձ իրավունք ունի բողոքարկելու պատվիրատուի, գնահատող հանձնաժողովի և գնումների բողոքարկման խորհրդի գործողությունները (անգործությունը) և որոշումները:

Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ յուրաքանչյուր անձ իրավունք ունի նույն օրենքի համաձայն նախքան պայմանագրի կնքումը բողոքարկելու պատվիրատուի և գնահատող հանձնաժողովի գործողությունները (անգործությունը) և որոշումները գնումների բողոքարկման խորհրդին:

Օրենքի 50-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետի համաձայն՝ եթե բողոքը ներկայացրած անձը բողոքարկում է գնման առարկայի բնութագրերը, նախաորակավորման հայտարարության կամ հրավերի պահանջները, ապա բողոքը ներկայացվում է մինչև հայտերի ներկայացման վերջնաժամկետը:

Նույն հոդվածի 7-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ խորհուրդը իրավունք ունի պատվիրատուի և գնահատող հանձնաժողովի գործողությունների կամ անգործության վերաբերյալ ընդունելու հետևյալ որոշումները.

ա. արգելելու կատարել որոշակի գործողություններ և ընդունել որոշումներ,

բ. պարտավորեցնելու ընդունել համապատասխան որոշումներ, ներառյալ՝ չկայացած հայտարարելու գնման ընթացակարգը, բացառությամբ պայմանագիրը անվավեր ճանաչելու մասին որոշման,

գ. փոփոխելու ընդունված որոշումները:

Նույն հոդվածի 9-րդ մասի համաձայն՝ բողոքի քննությունը բաց է հանրության համար, բացառությամբ պետական գաղտնիք պարունակող գնումների: Բողոքն ստանալու օրվանից հաշված՝ մեկ աշխատանքային օրվա ընթացքում, այդ մասին խորհուրդը հայտարարություն է հրապարակում տեղեկագրում:

Օրենքի 51-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Գնումների բողոքարկման խորհուրդ ներկայացված բողոքն ինքնաբերաբար կասեցնում է գնման գործընթացը՝ նույն օրենքի 50-րդ հոդվածի 9-րդ մասով նախատեսված հայտարարությունը հրապարակվելու օրվանից մինչև բողոքարկման վերաբերյալ ընդունված որոշման՝ տեղեկագրում հրապարակման օրը ներառյալ:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ Խորհրդի որոշմամբ կասեցումը կարող է հանվել, եթե պատվիրատուի ներկայացրած հիմնավորումների համաձայն, հանրային կամ պաշտպանության և ազգային անվտանգության շահերից ելնելով, անհրաժեշտ է շարունակել գնման գործընթացը: Նույն մասով նախատեսված որոշումը խորհուրդը հրապարակում է տեղեկագրում՝ այն կայացնելու օրվանից հաշված մեկ աշխատանքային օրվա ընթացքում:

Բողոքաբերը բողոքում նշել է, որ դահլիճային բազկաթոռները ՀՀ ներկրելու համար առնվազն 2 ամիս է անհրաժեշտ: Ցանկանում ենք հայտնել, որ նմանատիպ ապրանքներ հնարավոր է ներկրել ինչպես Ռուսաստանի Դաշնությունից, այնպես էլ Թուրքիայից, Ուկրաինայից, Վրաստանից, այդ դեպքում ներկրման ժամանակահատվածը կազմում է 3-6 օրացուցային օր: Բացի այդ, Պատվիրատուն պարտավոր չէ կանխատեսել, թե արդյոք ապրանքը պետք է ներկրվի ՀՀ, պատրաստվի ՀՀ-ում, թե արդեն իսկ առկա է նմանատիպ ապրանք և պահեստավորված է կազմակերպության պահեստում: Այսինքն, չկա որևէ հիմնավոր պատճառ գնման ժամանակացույցը խտրական համարելու համար, քանի որ կան բազմաթիվ եղանակներ այդ ապրանքը ունենալու, կամ ներկրելու, կամ պատրաստելու համար, որի ռիսկը Պատվիրատուն չի կարող կրել: Եվ ի վերջո, գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ չկա որևէ սահմանափակում ապրանքի մատակարարման ժամկետ սահմանելու համար, և Պատվիրատուն իր կարիքների, ըստ իր անհրաժեշտության է որոշում մատակարարման ժամկետները, ինչի պարագայում չի կարող խախտվել Օրենքի 13-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 2-րդ կետերի պահանջները:

Ելնելով վերոգրյալ իրավական հիմքերից և փաստական հանգամանքներից, գտնում ենք, որ ՀՀ քաղաքացի Սարգիս Թադևոսյանի կողմից 28.11.2017թ. ներկայացված բողոքը ենթակա է մերժման, քանի որ գնման ընթացակարգը կազմակերպվել է գնման գործընթացի միասնական կանոններով, մրցակցային, թափանցիկ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով, բոլոր կազմակերպություններին տրվել է գնման գործընթացին մասնակցելու հավասար իրավունք, իսկ գնման առարկայի բնութագրերը մրցակցության հավասար պայմաններ են ապահովել բոլոր հնարավոր մասնակիցների համար և չեն հանգեցրել գնումների գործընթացում մրցակցության համար չհիմնավորված խոչընդոտների:

Սակայն, ՀՀ քաղաքացի Սարգիս Թադևոսյանը չի իրացրել գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված իրեն վերապահված հնարարավորությունները, այն է՝ չի մասնակցել գնման ընթացակարգին, մինչև հայտերի ներկայացման վերջնաժամկետը

Պատվիրատուից չի պահանջել որևէ պարզաբանում ապրանքի մատակարարման ժամկետների վերաբերյալ:

Վերոգրյալով պայմանավորված՝ գտնում ենք, որ ՀՀ քաղաքացի Սարգիս Թադևոսյանի բողոքը անհիմն է, առկա չէ գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված պահանջների որևէ խախտում:

Ելնելով վերոգրյալից՝ Գնումների բողոքարկման խորհրդին խնդրում ենք՝

1. «ԴԱՇԱ» ՍՊԸ-ին սույն բողոքի քննության շրջանակներում ներգրավել որպես երրորդ անձ,

2. Հանել կասեցումը՝ հանրային շահերից ելնելով, քանի որ խոսքը գնում է կրթական հաստատության մասին և դահլիճային բազկաթոռները անհրաժեշտ են երեխաների համար տարավերջյան միջոցառումներ անցկացնելու համար,

3. ՀՀ քաղաքացի Սարգիս Թադևոսյանի կողմից 28.11.2017թ. ներկայացված բողոքը մերժել:

Բողոքի քննության նպատակով Խորհրդում տեղի ունեցած նիստերին մասնակցում էր «ԴԱՇԱ» ՍՊԸ-ի լիազորված ներկայացուցիչ Ռաֆայել Մկրտչյանը:

4. **<u>ԳԲԽ-ԷՍ-2017/48 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը, Խորհրդի հիմնավորումները և եզրահանգումը.</u>**

Խորհուրդն ուսումնասիրել է քաղաքացի Սարգիս Թադևոսյանի 28.11.2017թ. ներկայացրած բողոքը և կից փաստաթղթերը, 192ԴՊ-ԳՀԱՊՁԲ-17/1 ծածկագրով գնանշման հարցման հրավերը (այսուհետ՝ նաև Հրավեր), Պատվիրատուի կողմից Խորհրդին ներկայացրած՝ Բողոքի քննության համար անհրաժեշտ 192ԴՊ-ԳՀԱՊՁԲ-17/1 ծածկագրով գնանշման հարցման հանձնաժողովի (այսուհետ՝ նաև Հանձնաժողով) 13.11.2017թ. նիստի թիվ 1, 24.11.2017թ. նիստի թիվ 2, 29.11.2017թ. նիստի թիվ 3 արձանագրությունները, որպես երրորդ անձ ներգրավված «ԴԱՇԱ» ՍՊԸ-ի 01.12.2017թ. գրավոր դիրքորոշումը.

«Երևանի հ. 192 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ը դահլիճային բազկաթոռների ձեռքբերման նպատակով կազմակերպել է 192ԴՊ-ԳՀԱՊՁԲ-17/1 ծածկագրով գնանշման հարցում (այսուհետ՝ նաև ընթացակարգ):

Ընթացակարգին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել նաև «ԴԱՇԱ» ՍՊԸ-ն:

Հանձնաժողովը 29.11.2017թ. ժամը 11:00-ին կայացած նիստի թիվ 3 արձանագրության 1-ին կետով որոշել է «ԴԱՇԱ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը գնահատել բավարար և վերջինիս ճանաչել ընտրված մասնակից:

Նույն արձանագրության 2-րդ կետով Հանձնաժողովը որոշել է ընտրված մասնակցին ներկայացնել պայմանագիր կնքելու առաջարկ:

Քաղաքացի Սարգիս Թադևոսյանը 28.11.2017թ. Խորհրդին ներկայացրած բողոքով հայտնել է, որ «Երևանի հ. 192 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի կողմից 13.11.2017թ. հայտարարված 192ԴՊ-ԳՀԱԽՁԲ-17/1 ծածկագրով ընթացակարգի հրավերի պայմանագրի նախագծի Հավելված 1-ով նախատեսված գնման ժամանակացույցի համաձայն՝ ապրանքների մատակարարման ժամկետ է սահմանվել պայմանագիրը ուժի մեջ մտնելուց հետո 10 օրացուցային օրը:

Բողոքաբերը բողոքով հայտնել էր նաև, որ Հրավերով սահմանված տեխնիկական բնութագրին համապատասխան դահլիճային բազկաթոռները Հայաստանի Հանրապետություն ներկրելու համար առնվազն 2 ամիս է անհրաժեշտ, ՀՀ-ում արտադրելու համար՝ ևս նույնքան ժամանակ, ինչից եզրակացրել էր, որ պայմանագիրը ուժի մեջ մտնելուց 10 օրացուցային օրում հնարավոր կլիներ մատակարարել ապրանքը միայն այն դեպքում, եթե ընտրված մասնակիցը նախապես տեղեկացված լիներ Ընթացակարգի գնման առարկայի բնութագրերի մասին: Ելնելով վերոգրյալից՝ քաղաքացի Սարգիս Թադևոսյանը Ընթացակարգի կազմակերպման գործընթացում խտրական վերաբերմունքի միտում է տեսել, և գտնում է, որ Պատվիրատուի կողմից ստեղծվել են անհավասար մրցակցային պայմաններ և խախտվել են գնումների մասին ՀՀ օրենսդրության պահանջները:

Բողոքի քննության նպատակով 01.12.2017թ. տեղի ունեցած նիստի ժամանակ քաղաքացի Սարգիս Թադևոսյանը պնդեց բողոքն ամբողջությամբ:

Բողոքի քննության շրջանակներում որպես երրորդ անձ ներգրավված «ԴԱՇԱ» ՍՊԸ-ի լիազորված ներկայացուցիչը կարծիք հայտնեց քաղաքացի Սարգիս Թադևոսյանի կողմից ներկայացված բողոքի վերաբերյալ, անհիմն որակելով վերջինիս այն պնդումը, որ դահլիճային բազկաթոռները ՀՀ ներկրելու համար անհրաժեշտ է առնվազն 2 ամիս ժամանակ, նշելով, որ նմանատիպ ապրանքները մի շարք երկրներից (օրինակ, Ռուսաստանի Դաշնությունից, Թուրքիայից, Ուկրաինայից, Վրաստանից) հնարավոր է ներկրել անհամեմատ սեղմ ժամանակահատվածում՝ 3-6 օրացուցային օրում: Բացի այդ, ըստ վերջինիս, Պատվիրատուի կոմոլից չկա Հրավերով նախատեսված որևէ պարտադիր պայման, թե արդյոք ապրանքը պետք է ներկրվի ՀՀ, պատրաստվի ՀՀ-ում, թե արդեն իսկ

առկա լինի մատակարարի պահեստում: Որպես երրորդ անձ ներգրավված ընկերության ներկայացուցիչը հավելեց նաև, որ գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ չկա որևէ սահմանափակում ապրանքի մատակարարման ժամկետ սահմանելու համար, և Պատվիրատուն իր կարիքին համապատասխան է որոշում մատակարարման ժամկետները: Վերոգրյալով պայմանավորված՝ վերջինս եզրակացրեց, որ չկա որևէ հիմնավոր պատճառ Ընթացակարգի Հրավերի գնման ժամանակացույցը խտրական համարելու համար:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ նաև Օրենք) 3-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ գնումների գործընթացը հիմնվում է գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպման սկզբունքի վրա:

Օրենքի 13-րդ հոդվածի՝

• 1-ին մասի համաձայն՝ գնման առարկայի բնութագրերը պետք է ամբողջությամբ և հստակ նկարագրեն ձեռք բերվող ապրանքի, աշխատանքի կամ ծառայության հատկանիշները, դրանց ձեռքբերման և վճարման պայմանները՝ բացառելով տարակերպ մեկնաբանությունը: Գնման առարկայի բնութագրերը, որոնք ներառում են նաև պայմանագրի գինը, ընդգրկվում են պայմանագրում:

• 2-րդ մասի համաձայն՝ գնման առարկայի բնութագրերը՝

1) պետք է մրցակցության հավասար պայմաններ ապահովեն հնարավոր մասնակիցների համար.

2) չպետք է հանգեցնեն գնումների գործընթացում մրցակցության համար չհիմնավորված խոչընդոտների առաջացմանը.

3) պետք է լինեն օբյեկտիվորեն հիմնավորված և համարժեք լինեն այն կարիքին, որի բավարարման նպատակով կատարվում է տվյալ գնումը.

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ՝ Կարգ)

• 16-րդ կետի համաձայն՝ գնման պահանջի ծագման օրը պետական գաղտնիք չպարունակող գնումների դեպքում հաստատված կամ փոփոխված գնումների պլանի հրապարակման օրն է, իսկ պետական գաղտնիք պարունակող գնումների դեպքում՝ գնումների պլանի հաստատման կամ փոփոխման օրն է:

• 21-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերության համաձայն՝ գնման պահանջի ծագման օրվան հաջորդող վաթսուն աշխատանքային օրվա ընթացքում, պատասխանատու ստորաբաժանումը կազմում և հաստատում է գնման հայտը, որը ներառում է ապրանքների

մատակարարման, աշխատանքների կատարման կամ ծառայությունների մատուցման ժամկետները, այդ թվում՝ վերջնաժամկետը:

• 22-րդ կետի համաձայն՝ գնման առարկայի բնութագրերը և մասնակիցների որակավորման հատկանիշների գնահատմանը ներկայացվող չափանիշները սահմանելիս պետք է հաշվի առնել, որ դրանց պետք է բավարարեն մեկից ավելի հնարավոր մասնակիցներ՝ բացառությամբ օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով նախատեսված պայմաններով գնում կատարելու դեպքերի:

192ԴՊ-ԳՀԱՊՁԲ-17/1 ծածկագրով գնանշման հարցման հրավերի անբաժանելի մաս հանդիսացող պայմանագրի նախագծի թիվ 1 հավելվածով սահմանված տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի համաձայն՝ ապրանքի մատակարարման ժամկետ է սահմանվել պայմանագիրը ուժի մեջ մտնելուց հետո 10 օրացուցային օրը:

Խորհուրդն արձանագրում է, որ Ընթացակարգի հրավերի հավելված 1-ով նախատեսված տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով սահմանվել է Պատվիրատուի կարիքին համապատասխան՝ ապրանքի մատակարարման հստակ ժամկետ:

Այսպիսով, Խորհուրդը գտնում է, որ Հանձնաժողովը՝ հաստատելով 192ԴՊ-ԳՀԱՊՁԲ-17/1 ծածկագրով գնանշման հարցման հրավերով նախատեսված գնման առարկայի տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցը՝ չի խախտել գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված պահանջները:

Ելնելով վերոգրյալից՝ ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդը

Ո Ր Ո Շ Ե Ց

Քաղաքացի Սարգիս Թադևոսյանի 28.11.2017թ. ներկայացրած բողոքը մերժել:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումն իրավապարտադիր է:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով:

ՀՀ գնումների բողոքարկման
խորհրդի անդամ՝

ԷՄԻԼ ՍԱՐԳՍՅԱՆ